Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի ապրիլի 9-11-ը Բրյուսել գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Ավագ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 2019 թվականի ապրիլի 9-11-ը

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության շրջանակներում «Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ» 2-րդ պլատֆորմի հերթական նիստին

6. Քննարկված թեմաները

- Պլատֆորմի և դրա ներքո գործող աշխատանքային խմբերի (պանելներ) շրջանակում կայացած և նախատեսվող միջոցառումների վերաբերյալ քննարկում, հիմնահարցերի ընդհանուր ներկայացում
- Թվային շուկաների ներդաշնակեցման (HDM) ուղղությամբ իրականացված և նախատեսվող աշխատանքների մասին քննարկում
- Երկրների միջև առևտրային և միջտարածաշրջանային հարաբերությունների խորացման, կառուցվածքային և գործարար միջավայի բարեփոխումների հնարավորությունների քննարկում
- ՓՄՁ ոլորտում ֆինանսական միջոցների և արժեթղթերի շուկայի, ինչպես նաև տեղական տարադրամի հասանելիության բարձրացման ուղղությամբ իրականացվող միջոցառումների ներկայացում

- ՓՄՁ ոլորտի զարգացման միտումները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ» 2-րդ պլատֆորմի նիստին մասնակցում էին Արևելյան գործընկերության և ԵՄ երկրների, Եվրոպական հանձնաժողովի և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նիստի ընթացքում ներկայացվեց պլատֆորմի նախորդ նիստից հետո զարգացումների ընդհանուր ընթացքը, նիստի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը: Այնուհետև քննարկվեցին պլատֆորմի ներքո գործող պանելների շրջանակներում տեղի ունեցած նիստերի, հանդիպումների և աշխատաժողովների արդյունքները: Պանելների համակարգողները ներկայացրեցին վերջին զարգացումները, ընթացիկ իրավիճակները, նիստերի և հանդիպումների արդյունքները, ինչպես նաև հետագա սպասվող նիստերի և զարգացումների մասին տեղեկատվություն: Պլատֆորմի նիստի ընթացքում ներկայացվել և քննարկվել են Արևելյան գործընկերության շրջանակներում վերջին զարգացումները, Արևելյան գործընկերության երկրներում գործարար ոլորտում տեղի ունեցած և առաջիկայում նախատեսվող զարգացումները, ռազմավարական առաջնահերթությունները:

Նիստի ընթացքում Արևելյան գործընկեր երկրների ներկայացուցիչները ներկայացրեցին պլատֆորմի և պանելների շրջանակներում իրենց երկրներում առկա զարգացումներն ու նախատեսվող աշխատանքները: Մասնավորապես, ներկայացվեց նաև Թվային շուկաների ներդաշնակեցման (HDM) պանելի շրջանակում իրականացված և նախատեսվող միջոցառումների ու աշխատանքների մասին տեղեկատվություն: Այս ուղղությամբ նշվեց, որ ս.թ. փետրվարի 28-ին Բուխարեստում կայացած «Թվային տնտեսություն» խորագրով Արևելյան գործընկերության երկրների նախարարական 3-րդ համաժողովին ընդունված Թվային տնտեսության վերաբերյալ հռչակագրի շրջանակում շարունակական աշխատանքներ կիրականացվեն համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, որոնց արդյունքները կներկայացվեն առաջիկա հանդիպում-քննարկումների ընթացքում:

Քննարկումների ընթացքում բարձր գնահատականի է արժանացել ՀՀ ՓՄՁ աջակցության գործիքակազմը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Փոքր և միջին ձեռներերեցության զարգացման ազգային կենտրոնի գործիքներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նիստի ժամանակ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Նիստի շրջանակում պայմանավորվածություն ձեռք բերվեց ապահովել նախաձեռնված աշխատանքների շարունակական իրականացումը շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ հետագա նիստերի ու հանդիպումների շրջանակում արդյունքների ներկայացման ձևաչափով:

Առաջարկ է ներկայացվել կազմակերպել աշխատանքային նիստ Հայաստանում՝ համապատասխան փորձի ուսումնասիրության և հետագայում տեղայնացման նպատակով:

ՀՀ կողմից բարձրացվեց Արևելյան Գործընկերության խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ֆինանսական գործիքներին հասանելիության հարցը անդամ չհանդիսացող երկրների համար, որի շրջանակներում պայմանավորվածություն ձեռք բերվեց Ներքին շուկայի, Արդյունաբերության, Գործարարության և ՓՄՁ հարցերով Գլխավոր Դիրեկտորատի Միջազգային հարցերով պատասխանատու պարոն Մաքսիմ Բաբլոնի հետ քննարկել և վերհանել բոլոր հնարավորությունները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

15.04.2019թ.